Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
հուլիսի 12-ի N 739- Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՎ «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը	Տվյալ իրավական ակտի ընդունումը նախատեսող իրավական ակտի հոդվածը, մասը, կետը
1.	«Ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս վճարվող մետաղների համար գնորդի կողմից չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն և մատակարարման պայմանագրով որոշված՝ վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ տրանսպորտայինը) առավելագույն սահմանաչափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հարկային օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «ա2» ենթակետ

2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1063-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 31-րդ կետ, 28.2-րդ հոդված 2. «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20-24-րդ հոդվածներ
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի N 552-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված
4.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1317-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված
5.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1301-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ